Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբ

Տեղյակ եղեք: Առողջ Եղեք:

Բոլոր երեխաների եւ ընտանիքների համար առողջապահությունը տարրական անհրաժեշտություն է: Հետեւյալ քայլերը վերցրեք վստահ լինելու համար որ դուք եւ ձեր ընտանիքը հնարավորին չափ լավագույն խնամք ստանաք.

1) Միշտ Օգտվեք օրինականորեն արտոնագրված Բժշկական Խնամք Մատուցող Բժիշկից

- Հեռաձայնեցեք Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբի Սպառողների Տեղեկատվական Ծառայության Գծին (916) 263-2382 համարով ձեր առ ողջապահական խնամք մատուցող Բժշկի արտոնագրված լինելը ստուգելու համար:
- Արտոնագրված բժիշկների, բժիշկի օգնականների եւ ոտքի բժիշկների վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար, այցելեցեք Կալիֆորնիայի Բժշական Հանձնախումբի Web site-ը www.mbc.ca.gov հասցեյով: Տեղեկություն այլ արտոնագրված բժշկական խնամք մատուցող բժիշկների մասին կարելի է գտնել Սպառողների Հարցերի Բաժանմունքի Web site-ում www.dca.ca.gov հացեյով:

2) Կատարեք ձեր պարտականությունը ձեր բժիշկը գտնելու աշխատանքում

- Բժշկական դարմանատներում զանազան բժիշկներ են աշխատում: Նախկան ձեր տեսակցությունը հեռաձայնեցեք դարմանատուն եւ իմացեք այն բոլոր բժիշկների անունները որոնք ձեզ են տեսնելու: Հեռաձայնեցեք Բժշկական Հանձնախումբ (916) 263-2382 համարով ստուգելու յուրաքանչյուր բժիշկի արտոնագրված լինելու իրավունքի մասին:

3) Ոչ Ատոնագրված Անհատների Կողմից Դեղագրով հանձնարարված Դեղորայք Չվերցնեք

- Միմիայն արտոնագրված բժշկական խնամք մատուցող Բժիշկից ընդունեցեք դեղագրով հանձնարարված Դեղորայք:
- Հայտնեցեք ձեր բժշկական խնամք մատուցողին այն բոլոր դեղերի մասին որոնք դուք ընդունում եք: Նրանք պետք է իմանան եթե իրենց նշանակած դեղերը բացասականորեն են հակազդում այն դեղերի հետ որոնք դուք արդեն ընդունում եք:

4) Օգտվեք Բժշկական Հանձնախումբից որպես ձեր Առ ողջապահական Խնամքի Աղբյուր

- Եթե դուք որեւէ հարց եք ունեցել բժիշկի համ բժշկական խնամք մատուցողի հետ, հեռաձայնեցեք Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբ 1-800-633-2322 անվճար հեռախոսահամարով:

Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբը նահանգային գործակալություն է, որը բժիշկներին արտոնագիր է տալիս եւ նաեւ զրկում է նրանց:

Հանձնախումբը հայթայթում է երկու գլխավոր ծառայություններ. տեղեկություն բժիշկների մասին եւ հետաքննություն բժիշկների դեմ ուղղված բողոքների մասին:

STATE OF CALIFORNIA
DEPARTMENT OF CONSUMER AFFAIRS
1876
MEDICAL BOARD OF CALIFORNIA

Դուք նույնպես կարող եք կապնվել Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբի հետ Ինտերնետով www.mbc.ca.gov հասցեյով:

Ինչպե՞ս Բժիշկ Ընտրել

Որպես հիվանդ, դուք պետք է հանգիստ զգաք ձեր բժշկական խնամք մատուցողի հետ։ Եթե զգում եք որ կարիքը ունեք ուրիշ բժիշկի, կարող եք դիմել հետեւյալներին.

- ☑ Եթե ապահովագրություն ունեք, ստուգեցեք ձեր ապահովագրողի կամ ձեր գործատիրոջ նպաստներ ապահովող գրասենյակի հետ ցուցակագրված բժիշկների անվանացանկը տեսնելու նպատակով։ Ապահովագրական ծրագրերից շատերը սահմանափակում են ձեր բժիշկների ընտրություն կատարելու հնարավորությունը եւ պահանջում են որ հիմնական խնամք մատուցող բժիշկ (PCP) ընտրեք իրենց ցուցակից։

- ☑ Եթե դուք բժիշկների ընտրություն կատարելու սահմանափակում չունեք, բժիշկների մեծամասնությանը կարող եք տեսնել հեռախոսի դեղին էջերում։ Ձեզ համար որպես հիմնական խնամատար բժիշկ նկատի ունեցեք Ընտանեկան Բժիշկ, Ընդհանուր Բժիշկ, կամ Ներքին Հիվանդությունների Մասնագետ։ Այլ պարագաներում դուք կարող եք կարիք զգալ այնպիսի մասնագետի ինչպիսիք են Մանկաբարձ/Գինեկոլոգ-ի, Ոտքի Բժիշկի, Ակնաբուժի, կամ ձեր երեխաների համար Մանկաբուժի։

- ☑ Խոսեցեք ձեր ընկերների կամ աշխատակիցների հետ իրենց նախընտրած բժիշկների մասին կամ փնտրեք ճերմակ էջերում ձեր շրջանի Medical Society բաժնում։ Հավանական բժիշկների անունները ձեռք բերելուց հետո, հեռաձայնեցեք նրանց գրասենյակները եւ հարցրեք եթե նրանք նոր հիվանդներ ինչպես նաեւ ձեր ապահովագրական ծրագիրը ընդունում են թե ոչ։

- ☑ Հեռաձայնեցեք Բժշկական Հանձնախումբ (916) 263-2382 համարով կամ ստուգեցեք www.mbc.ca.gov Web site-ը հաստատելու համար թե ձեր ընտրած բժիշկը ունի Կալիֆորնիայում գործող արտոնագիր։ Դուք նույնպես կարող եք գործածել Web site-ը իմանալու համար թե արդյոք բժիշկին կարգապահության հրավիրել են եւ կամ բժիշկին դեմ կան օրինական ամբաստանություններ։

- ☑ Ձեր առաջին տեսակցությանը ներկայացեք պարտրաստ՝ ձեր մոտ ունենալով ձեր առողջության վերաբերյալ այն հարցերի ցանկը որոնց մասին դուք ուզում եք խոսել ձեր բժիշկի հետ։ Պատրաստեցեք այն հարցումների ցուցակը որոնց պատասխանը դուք ուզում եք ստանալ։

Դուք միշտ պետք է հանգիստ զգաք ձեր արտոնագրված բժշկական խնամք մատուցող Բժիշկի հետ։

Վստահեք ձեր կանխազգացումներին։

Լսողությունը տկարացած անհատներին հետաքրքրող հեռախոսային համարներ.
(916) 263-2687 – Բժիշկների մասին տեղեկություն ձեռք բերելու. (916) 263-0935 – Սպառողների բողոքներ ներկայացնելու

ARMENIAN

Դուք նույնպես կարող եք կապվել Կալիֆորնիայի Բժշկական Հանձնախումբի հետ Ինտերնետով www.mbc.ca.gov հասցեյով։